

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԵՊՔ

Հիմնական Արևելյան պատերազմը :

Մեր առեւնի հանգիստը քաղաքական գիւղականներուն մէջ Արևելեան խնդիրն ու անկէջ ծագած պատերազմը առանց տարակուսի ամենէն մեծագոյնն ու նշանաւորն է, ոչ միայն իրին արտաքին երևութիւն մեծութեանը նայելով, հապա նաև կրօնական, բարոյական և քաղաքագիտական տեսութեամբ ալ միանգամայն նկատելով, այն պէս որ այս գիւղական պատմութեան մէջ մեծ դարաշրջան մը պիտի կազմէ. անոր համար մենք ալ ուսումնական օրագրի մը պայմանին համեմատ՝ այս խնդիրը ըսած յետին տեսութեամբս առնելով, միտք լռելիք հետ զհետէ մեր թերթերուն մէջ իրեն ծագմանէն մինչև ետքի ամիսներս ան կողմնասէր զգուշ պարզ համառօտ պատմական ու ժամանակագրական ծանօթութիւն մը տալ. այս բանիս համար մեզի ստոյգ աղբիւր ունենալով Կոթայի հռչակաւոր Տարեգրութիւնը : Ասկէց յայտնի կ'երևայ որ մեր գիտմունքը ասով ամենակին լրագրի պաշտօն կատարել չէ, հապա 'ի սկզբանէ բովանդակութիւն մը ընելով այն գիւղականներուն, որ արդէն ամենուն ծանօթ են, գիւրդութիւն մը ընծայել՝ քաղաքագիտութիւնը իմաստասիրութեան կողմանէ նկատող մտքերու, և միանգամայն մեր թերթերն ալ ապագային առջևը յամանա կակից պատմութեան այսպիսի մեծ յիշատակի մը աւանդապահներէն մէկը ցուցնել :

1853

ՓԵՏՐՈՒԱՐ

28. Ռուսաց արտաքին կարգի դեսպան Մենշիկով իշխանը Կոստանդնուպոլիս կը հասնի :

ՄԱՐՏ

6. Բէֆադ փաշան արտաքին գործոց պաշտօնեայ կը գրուի փոխանակ Գուլատ Էֆենտիի :
16. Մենշիկով իշխանը ծանուցագիր¹ մը կու տայ առ Բարձրագոյն Դուռը . 10 Փետրուար 1853, Սուլթանը կը ծանուցանէր Ռուսաց կայսեր՝ թէ սուրբ տեղեաց վերաբերեալ խնդիրը վերջապէս որոշուած էր . հարդէ՛ւնէ՛ ի՞նչ մը ու Բէրձան մը այս ծանուցումը հաստատեցին : Սակայն փոխանակ եղած խոստմանը համաձայնելու՝ Սուլթանին պաշտօնեայքը այնպիսի որոշմունքներ ըրին, որով Կայսեր կրօնական զգացմունքը զայրացաւ և իրեն անձին պատշաճ եղած յարգանացը դէմ սեպեց : Անոր համար Կայսրը ուղեց այս զոհանաց հատուցումը խնդրել, ու տեական միաբանութեան հաստատուն պայմանագրութիւն մը, որ վերջ տայ՝ Սուլթանին յոյն հպատակաց տէգուցութեանը և ապագային հա-

մար ալ ապահովցնէ զիրենք՝ հաստատուն ու անբռնաբարելի երաշխաւորութեամբ :

19. Գաղղիական նաւատորմիդ, որուն հրամանատար էր Սիւս ծովակալը երկրորդը, պատուէր կ'ընդունի Յունաստանի ջրերը երթալու :
22. Մենշիկով իշխանը իր խնդիրքը կը կրկնէ՝ առաջարկելով գաշանց¹ ձև մը 'ի մէջ Տաճկաց և Ռուսաստանի :

ԱՊՐԻԼ

19. Մենշիկով իշխանը երկրորդ ծանուցագիր մը կու տայ Տաճկաստանի արտաքին գործոց պաշտօնէին այս իմաստով՝ թէ Կայսրը իրաւունք ունի ապագային համար հաստատ երաշխաւորութիւններ պահանջելու . և այս երաշխաւորութիւնները այնպիսի օրինակաւ մը կ'ուզէ՝ որ իրեն լաւագոյն կ'երևայ, որով կարենայ ապահովցնել այն կրօնը, զորն որ կը դաւանի ինքն ու Սուլթանին քրիստոնեայ հպատակաց մեծ մասը : Կայսրը այս երաշխաւորութիւնները չկրնար ուրիշ կերպով մը ձեռք ձգել, բայց եթէ այնպիսի մուրհակով² մը, որ գաշնագրութեան զօրութիւն ունէ՛ նայ և այնպիսի հաստատութիւն, որ ալ Դրան կառավարութեանը պաշտօնեայք փոփոխութիւն մը չկարենան ընել :

ՄԱՅԻՍ

5. Դուռը Մենշիկով իշխանին կը հաղորդէ Սուլթանին երկու հրովարտակները, որոնք սուրբ տեղեաց խնդրոյն կը վերաբերէին, այս ինքն մէյ մը նկատմամբ սուրբ գերեզմանին գմբէթին նորոգութեանը, և երկրորդ Յունաց ու Լատինացոց՝ Երուսաղէմայ քանի մը եկեղեցեաց համար ունեցած գծաւորութեանցը վերջ տալու գիտմամբ : — Մենշիկով իշխանը նոյն օրն այսպիսի ծանուցագիր մը կու տայ Բարձրագոյն Դրան արտաքին գործոց պաշտօնէին . Այդ երկու հրովարտակաց մէջ բովանդակուածը՝ մասամբ միայն Ռուսաց կայսեր խնդիրքը կը լեցնէ և լռութեամբ կանցնի Յունաց առանձնաշնորհութեանց երաշխաւորութեանը վերայօք, որ էր գաշնագրութեամբ մը ամէն շնորհուած արտունութիւնները անդարձ կերպով հաստատել : Այս կտորս ամենէն աւելի հարկաւորն է, և բացարձակապէս ալ հարկ է որ այս խնդիրս առանց յապաղանաց լուծուի : Այս գաշանց էական մասունքը նոյն կը մնան, և պատասխանը ասկէց ինչուան Մայիսի 10 կը սպասուի : — Ծանուցագրին

1 Գղ. Note.

1 Գղ. Convention.

2 Տճ. Սէնէք :

- հետ մէկտեղ գրած էր նաև առաջարկեալ դաշանց մուրհակին ձևը՝ վեց յօդուածով, որոնց առաջինն էր . Չկրնար փոփոխութիւն մը ըլլալ այն իրաւանց , արտունութեանց ու ապահարկ ազատութեանց մէջ , զորոնք յունական եկեղեցին ու կղերը ստացած են ան յիշատակ ժամանակէ 'ի վեր , կամ այսօրուան օրս ալ կը վայելէն բոլոր Տաճկաստանի մէջ :
10. Բարձրագոյն Դուռը այսպիսի ծանուցագիր մը կու տայ Ռուսաց . Դուռը միշտ հաստատ փափաք ունենալով Ռուսաց կայսեր հետ դրացւոյ մը բարեկամական վերաբերութիւնները պահել , ամենևին չտարակուսեցաւ՝ Մենչիքով իշխանին ըրած խնդիրքներէն զանոնք ընդունելու , որ ոչ իրեն պատուոյն և ոչ ալ իրեն անկախութեանը դէմ էին . սակայն ինքը չկրնար օտար տերութեան մը հետ այնպիսի դաշնագրութիւն մը ընել , որ միայն ներքին կառավարութեան իրաց վրայ դառնայ . որովհետև ասիկայ իր ինքնիշխանութեան իրաւունքը զոհելըսէ է : Սուլթանը ազատ կամօք կը ծանուցանէ՝ որ իր երկրին մէջ եղած քրիստոնեայ եկեղեցեաց արտունութիւններն ու ապահարկ ազատութիւնները և մասնաւորապէս Յունացը՝ անեղծ ու ամբողջ պիտի պահուին : — Մենչիքով իշխանը պատասխան կու տայ ու վերջնագիրը ինչուան ամսոյս 14 կ'երկընդունէ : Սակայն այսու ամենայնիւ նորէն կը պահանջէ՝ որ Դուռը դաշնագրութեամբ յանձնառու ըլլայ այն պայմաններուն , և կը ծանուցանէ՝ որ եթէ իր այս պահանջմունքը ընդունելի չըլլայ , ընցած է իր գեսպանութիւնը :
13. Տաճկաստանի պաշտօնեայքը կը փոխուին և հետեւեալները կ'անուանին . Մուսաֆաֆա փաշա մեծ՝ եպարքոս . Մէհմէտ Նշի փաշա պատերազմի պաշտօնեայ . Բէշիտ փաշա արտաքին գործոց պաշտօնեայ , և այլն :
15. Օսմանեան դուռը Մենչիքով իշխանին կը ծանուցանէ թէ Պաշտօնեայ փոփոխութեան պատճառաւ անկարելի է այս 'ի կախ մնացած խնդիրը հինգ վեց օրուանէ առաջ լուծել :
18. Մենչիքով իշխանին երրորդ ծանուցագիրը առ Բէշիտ փաշա . (Տ . 13) . Մենչիքով իշխանը կը տեսնէ որ Դրան ըրած հազորակցութեանց վախճանն է՝ ժամանակ վատարկելու հնարք . անոր համար համազուած ըլլալով իր Զանիցը պարապ ըլլալուն վրայ՝ կը ծանուցանէ ինքը որ ալ իր գեսպանութեան պաշտօնը ընցած է , և թէ իրեն տրուած իշխանութեան զօրութեամբը՝ պիտի ելլէ Կոստանդնուպոլսէն հանդերձ կայսերական գեսպանատան բովանդակ պաշտօնէիւքը : Դուռը չուզենալով բաւական երաշխաւորութիւններ տալ յոյն-ռուսական կրօնին վրայօք՝ Ռուսաց կառավարութիւնը կը բռնադատուի իր յատուկ զօրութեամբը այս երաշխաւորութիւններն առնելու . և միանգամայն այս միջոցիս մէջ ո՛ր և իցէ վնաս որ տրուելու ըլլայ արևելեան եկեղեցւոյն ներկայ վիճակին , Կայսրը իբրև թշնամութեան գործք մը կը համարի ընդդէմ Ռուսաստանի :
19. Բէշիտ փաշան այս ծանուցագիրը կու տայ

- առ Մենչիքով իշխանը . Այն հրովարտուել , զորն որ Սուլթանը Յունաց պատրիարքին շնորհեց , պէտք է որ Ռուսաց կայսեր ամէն կերպ վարի փարատէ յունական հաւատքին ապահովութեանը վրայ : Ամենևին փոփոխութիւն մը պիտի չըլլայ Երուսաղէմայ սուրբ տեղեաց նկատմամբ՝ ինչուան ոչ Գաղղիոյ ու Ռուսաստանի կառավարութեանց առաջուց չծանուցուի : Ռուսաց թոյլ տրուած է Երուսաղէմ եկեղեցի մը ու հիւանդանոց մը շինել , և Դուռը պատրաստ է թէ այս նիւթիս և թէ յոյն կղերին մասնաւոր արտունութեանցը համար դաշնագիր մը ստորագրելու :
21. Մենչիքով իշխանը կը ծանուցանէ Բարձրագոյն Դրան՝ թէ ասկէց վերջը ալ գեսպանական վերաբերութիւնները կտրուած են , և Կոստանդնուպոլսէն կ'ելլէ :
26. Բարձրագոյն Դուռը յիշատակագիր¹ մը կու տայ Գաղղիոյ , Մեծին Բրիտանիոյ , Աւստրիոյ և Բրուսիոյ գեսպանացը . Սուրբ տեղեաց վերաբերեալ Ռուսաստանի հետ եղած խնդիրը շտկուած կարգադրուած էր երկու կողման հաճութեամբ , երբ Մենչիքով իշխանը յոյն կրօնից նկատմամբ նոր պահանջմունքներ դուրս հանեց , որոնք ու իցէ կառավարութեան հիմունքն ու անկախութիւնը քանգելու կը սպառնան՝ թէ որ մէյ մը զասոնք ընդունելու ըլլայ : Ուրեմն հարկ էր որ այս պահանջմունքները մերժուէին : Դուռը Ռուսաստանի հետ իր բարեկամութիւնը կը պահէ , սակայն տեսնելով այս տերութեան ծովու ու ցամաքի վրայ ըրած պատերազմական պատրաստութիւնը՝ կը հարկադրի ինքը զինքը պաշտպանողական վիճակի մէջ գնելու :
30. Ռուսիոյ պաշտօնեայց դահլիճը չըջաբերական մը կը հանէ օտար տերութեանց քով եղած ռուս գեսպանաց ու քաղաքական գործակալաց . ասոր մէջ յետ բացատրելու այն պատճառները , որոնցմով որոշեց Կայսրը դաշնագրի մը ձևով խնդրել Դուռէն նոր երաշխաւորութիւններ յոյն եկեղեցւոյն արտունութեանցը համար , կը ծանուցանէ որ Կայսեր գիտաւորութիւնը ամենևին Օսմանեան պետութեան անկախութեանը կամ ամբողջութեանը դէմ գործել չէ :
31. Ռուսաց ինքնակալութեան արտաքին գործոց պաշտօնեայ Դեսսեղրոտ կոմսը պաշտօնագիր² մը կը զրկէ Բէշիտ փաշային . Կայսրը Դրան մերժումը իբրև իրեն անձնական նախապիտիք մը կը համարի . և իր գեսպանին բռնած կերպին շատ կը հաւնի , և Դրան գեռ ու թը որ ալ վերջին անգամ ատեն կու տայ . այս ժամանակն որ անցնի , ռուս գնդերը սահմանագիծը պիտի մտնեն՝ ոչ եթէ պատերազմ ընելու համար , հապա Սուլթանէն այն չընորհմունքները առնելու վախճանաւ , զորոնք չուզէն ինքը բարեկամութեամբ տալ :

1 Գղ . Memorandum. 2 Գղ . Dépêche.